

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ՔՂՔԱԿՅՈՒԹԻՒՆ
ՊԵՏԵ Կ ՈՒՂՂԵԱՆ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի
ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL
NOR-OR

CAIRE, B. P. N° 117

Ձեռագիրներն ետ չեն դարձուիր:

Արտոնահատ, ժ. ՄԻՒՆԻՍԵՒՆ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սեղանակալութիւն ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս	
Գանձարէի համար	Տարեկան, 50
»	» Վեցամսեայ 30
Շրջակայից »	Տարեկան, 60
»	» Վեցամսեայ 35

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՇԱՄԱՐ	
Տարեկան	Ֆրանկ 18
Վեցամսեայ	» 10

ՌՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱՄԱՐ	
Տարեկան	Րուբլի 7
Վեցամսեայ	» 4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻ ԿԱՆԿԵ Է

ԵՒ ԹՂՔԱԿՅՈՒԹԻՒՆ

Թերթին վարչութեանը վրայ է:

ՉԻՆԱԿԱՆ ՀԱՐՑՆ ՈՒ ԵՒՐՈՊԱՆ

Ֆրանսացի գիւտնագէտ մը, Լոնտոնայի նախկին գործակատար, այժմ անդամ Երեսփոխանական ժողովին, Մ. տ'Էսքուռէլ տը Գոննզան, նշանաւոր նամակ մը կ'ուղղէ «Թան»-ի, Մայրագոյն-Արեւելքի հարցին վրայ, որուն քով, Արեւելեան խնդիրն անգամ, թէեւ աւելի քան երբէք անհարթելի, երկրորդական տեղ մը կը բռնէ եւրոպական մեծ տէրութեանց մասնագետ թեմանց կարգին մէջ:

Քանի մը հատուածներ այս շահեկան յօդուածէն, կ'արժեն արտատպուիլ հոս:

«Ո՞վ կ'երազէր, շատ տարիներ առաջ, Անոնք որ Բէ-Ձի-Լի ծոցը կը ցուցնէին իբրև նախնաձերի ասպարէզ գործողութեան, կամ անոր հոն կը գտնէր ճակատամարտի դաշտ մը: Ո՞վ կ'երազէր, Անոնք որ չինական փեթակը կը նկատէին իբրև գիւրդի ու բաժանման համար հասուն որս մը. կամ ան, որ 400 միլիոն բնակիչներով այս փեթակին ահաւելի զարթումէն կը վախնար: Անոնք որ այս 400 միլիոններուն կը ծախէին զէնք, մթերք, մեքենաներ. անոնց կը զրկէին դատարարներ, ուսուցիչներ. անոնցմէ կը կորզէին մենաշնորհներ, զանոնք կը գնէին ստորնացուցիչ վիճակի մէջ, անոնց խղճին ու շահերուն կ'սպառնային, և կամ անոր անտարբերութեան մեղութեանը մէջ կը գոչէր զգուշացէ՛ք, ձեզի դէմ շարժման կը գնէք թըլշնամի բանակ մը, հազարաւոր բանակներ, սալխարհ մը, շղթայազերծ կ'ընէք յեղափոխութիւն մ'որ իր նախընթացը չունի մարդկութեան պատմութեանը մէջ»:

«Դէպքերը պատասխանեցին, և լոկ սկիզբ մ'է, ցաւագին նախաբան մը՝ ուրիշ աւելի ստակալի թէեւ հեռաւոր ողբերգութիւններու, որոնք արեւնով պիտի ողորեն ո՛չ միայն Մայրագոյն Արեւելքը, այլ և ծեր Եւրոպան և բոլորնուրեք աշխարհը, եթէ յամառինք մեր կուրութեան մէջ:

«Երանի՛ թէ կրնայինք գէ՛մ յանդիման նայիլ ճշմարտութեան, ու ա՛լ ցնորներով ու բառերով չ'տուժէինք. բայց կարո՞ղ ենք սյգ բնաին: Ահա՛ խնդիրը: Յամառելով գեռ ինքզինքնիս խաբելու, փոխանակ լուծելու, պիտի կնճռտենք խնդիրը, ինչպէս որ ըրինք Հայաստանի մէջ, ու աւելի ծանրակշիռ կերպով: Պիտի գոցենք շարիքը, փոխանակ զայն բուժելու:

Եւրոպա պիտի փորձէ զսպելու ապստամբութիւնը, ողորմելի միջոցներով, զորս իր հակամարտ շահերն ու հեռաւորութիւնը կը ներեն

տրամագրել: Ենթագրենք թէ շուտով յաջողի, շնորհիւ ամենուն համաձայնութեան, հասարակաց վտանգին հանդէպ: Խնդրին լոկ առաջին մասը պիտի լուծուի. շարքերը պիտի դադրին: Այն ատեն պիտի բացուի երկրորդը, պատիժին, տուգանքներուն և փոխարէն վրէժխնդրութեանց. ու յետոյ երրորդը, ձեռք առնելիք երաշխարութեանց մասը, որպէս զի ապահովութիւնը տիրէ, ու Ձինաստան կառավարուի ի կրկին գոհացում եւրոպացիներուն ու Ձինացիներուն:

Մէկդի թողունք առաջին շրջանն ուր այժմ կը գտնուինք. Եւրոպա համաձայն է յանձն առնելու բոլոր հարկաւոր զոհողութիւնները շարքերը դադարեցնելու համար: Այսքան տկար ու ժերով, մեծ մասամբ հալու ճամբայ հանուած ուղղամթերքով ու գնդերով, ինչպէս պիտի կրնայ սկսելու մտա կողմ ջրհեղեղեան անձրևներու եղանակին նախընթաց օրին, գլուխ հանել այսպիսի գործ մը: Պէտք է հաշուի առնել ամենուն համաձայնութիւնը, պետերուն ու զօրքերուն քաջութիւնը: Ենթագրենք որ ապստամբութիւնը նուաճուի եւրոպական զէնքերով կամ ինքնիրեն հանդարտի, ինչպէս ետ կը քաշուի յարդումը, այն ատեն Եւրոպան պէտք է որ դասեր ցուցնէ, անգթաբարձ գլխատել տայ մարդասպանները: Հիմա կուտի տիրող գեղին սարսափին պիտի յաջորդէ ճերմակ սարսափը, ասի անխուսելի է. բայց այդ երկրորդ սարսափը պէտք չէ որ կրկնութիւնն ըլլայ անցեալ սխալներուն, որոնք բաժանման նշանը. թո՞ղ որ այսպիսի յիմարութիւն մը մեզ ամենքս ալ պիտի քաշէ տանի մեր ուժերէն անհամեմատ վեր զօհողութիւններու, արկածներու և շփոթութիւններու զօրս հիմակուրէն կրնանք երեւակայել. և նոյն իսկ իբրբը լուազոյն վիճակի մը վերածելով պիտի յանգի միմիայն փճացնելու եւրոպական աշխատանքը և բոլոր քաղաքակրթեալ աշխարհին մէջ յարուցանելու գործադուլի, թշուառութեան ու ապստամբութեան ահաւելի տագնապներ, ինչպէս որ քանիցս ցոյց տուած եմ:

«Պէտք է ուրեմն խոհեմըն չափ գնել պատիժներուն և ի գործ դնել միայն արդար ու հարկաւոր վրէժառութիւնները, յետոյ երաշխարութիւններ ձեռք առնել ապագային համար: Այս երաշխարութիւններն ո՞վ պիտի տայ:

«Ձինաստան ա՛լ չ'կառավարուի. փոխանակ զօրացնելու, ճարտնական յաշիւութիւններէն վերջ, անզօր կառավարութիւնն որ կը մնար իրեն, վերածեցինք զայն անժողովրդականութեան, ապիկարութեան, ոչնչութեան:

Ռուսիան միւսներէն աւելի լաւ գիտցաւ չափաւորել երեւոյթներն, տիրանալով Բօր-Ար-

դիւրի, բայց Գերմանիան, բայց Անգլիան, իրարու ետեւէ գրաւելով Գիան-Ձեու, Ուայ-Հայ-Ուէյ, իբր թէ անտէրունը երկիրներ ըլլային, Ֆրանսան արանալով Գուանկ-Ձեույի, ճեպեցուցին կառավարական անկումն ու կարծիքի ըմբոստութիւնը»:

Հետեւաբար, Մ. տ'Էսքուռէլ տը Գոննզան, այս սխալները նախապէս ճանչնալէ յետոյ գանձք դարմանելու կարծիքէն է: Պէտք է վերադարձնել Ձինաստանի չինական կառավարութիւն մը, որ ըլլայ Եւրոպայի գործն և գրաւականը, ամենուն երաշխիքը, և ո՛չ թէ ամեն մէկուն գործիքը: Տէրութիւնները պարտին ջանալ վերաշինելու ինչ որ քանդեցին — իշխանութիւնը — հիմնել տեսակ մը թեւարկութիւն որ պաշտպանէ ո՛չ միայն Ձինաստանը, այլ մանաւանդ Եւրոպան ընդդէմ իր սեփական ընկալաւորմանը, կառավարութիւն մ'որ ըլլայ միջնորդ և սանձ: Մ. Գոննզան այսպէս կ'եզրակացնէ:

«Եթէ կառավարութիւնները համաձայնին լոկ մրցումի թափով շահագործելու արեւելեան կազմալուծումն ու անկարգութիւնը, իրենց համաձայնութիւնը տեսական չ'ըլլայ. կարճ ժամանակի մէջ իրարու վրայ պիտի յարձակին, Ձինացիք պիտի օգտուին անոնց պատակտուներէն, թուրքերն ալ չ'պիտի ձեռքէ փախչեն այսքան նպաստաւոր անմիաբանութիւն մը, և իրենց հետ բոլոր անկարգ երկիրները: Ասի պիտի ըլլայ տիեզերական պատերազմի սկիզբը, և իրօք, Գաւուր:

Ուստի, Եւրոպան եթէ կուզէ մնալ քաղաքակրթութեան գլուխը, եթէ կուզէ գեռ ըլլալ Եւրոպա, պարտի միանալ ո՛չ միայն զսպելու համար Ձինաստանը, այլ և կազմակերպելու զայն, և հո՛ս է իր պաշտօնին բարձրութիւնը, և անով կ'իրագործուին համերաշխութեան երազները, և գուշակութիւնները, որոնք գեռ երկի անբանաւոր կը նկատուէին: Այսպիսի պարձ մը կը պահանջէ տեսական, գիտուն, ներդաշնակ համաձայնութիւն մը, վասնզի պիտի ըլլայ ո՛չ թէ բողբոջը, այլ սկզբնաւորութիւնը եւրոպական Միացեալ-Նահանգներուն:

(Շարունակելի)

ԵԳԻՊՏԱԿԱՅ ԳՈՐԾԵՐ

(Շար. նախորդ թիւին)

Գահիրէ 17/30 Մայիս 1900

Ահաւասիկ 1898 եւ 1899 տարիներու ելմտից հաշուեցողցներու մէկ ամփոփումը, ուր նշանակեալ թիւերը կը ներկայացնեն եզրպատ ողջ ըրը. որուն 87 3/4 հատը կ'արժէ մէկ օսմանեան եւ 100ը մէկ եզրպատական ոսկի սոյն ամփոփման մէջ առնուած չեն կոտորակները:

Table with 4 columns: 1899 SURF, 1898 SURF, 1897 SURF, 1896 SURF. Rows include categories like 'հրահրող', 'սոցիալ', 'ժողով', 'ժամօր', 'Պարտադրություն', 'Վճարված', 'Գործունե հրահրող', 'Կրթիչ', 'Սոցիալ', 'ժողով', 'ժամօր', 'Պարտադրություն', 'Վճարված', 'Գործունե հրահրող', 'Կրթիչ', 'Սոցիալ', 'ժողով', 'ժամօր', 'Պարտադրություն', 'Վճարված', 'Գործունե հրահրող'.

Ուսման մասամբ կրեցողները և զբաղվող յատկացեալ ամսաթղթերը... յետոյ կուգան Ս. Եկեղեցւոյ մէջ պաշտօնէին ամսականը...

Ս. Միսսա-մասուոն եւ գերեզմանատուն (Մարմինա) — Ասոնք եւս հաստեմարեր կալուած չունէին, մինչեւ անցեալ տարի, երբ պղտիկ տուն մը, վազմ եղաւ Ս. Միսսա մատուո- գերեզմանատան, որոնց եկամուտի գլխաւոր աղբիւրներն են հողագին, նուէրներ, եւլն...

Ս. Միսսա-մասուոն եւ գերեզմանատուն (Մարմինա) — Ասոնք եւս հաստեմարեր կալուած չունէին, մինչեւ անցեալ տարի, երբ պղտիկ տուն մը, վազմ եղաւ Ս. Միսսա մատուո- գերեզմանատան, որոնց եկամուտի գլխաւոր աղբիւրներն են հողագին, նուէրներ, եւլն...

Ս. Միսսա-մասուոն եւ գերեզմանատուն (Մարմինա) — Ասոնք եւս հաստեմարեր կալուած չունէին, մինչեւ անցեալ տարի, երբ պղտիկ տուն մը, վազմ եղաւ Ս. Միսսա մատուո- գերեզմանատան, որոնց եկամուտի գլխաւոր աղբիւրներն են հողագին, նուէրներ, եւլն...

1898 եւ 9 տարիներու ելմտական հաշիւներու տախտակները մէջ բերելէ ետքը, հարկ է, մանաւանդ հետազննակ անհրազեկ ընթացողին համար կցել հետեւեալ ծանօթութիւնները, իբր լրացուցիչ մաս, զոր աւելի զիրահասկնալի ընելու համար կը բաժնենք տոմարին զըլուխներու :

Եկեղեցի. — Ս. Աստուածածին եկեղեցին միակն էր ազգային հաստատութիւններուն մէջ, որ չունէր կալուած մինչեւ 1898 յունուար ամիսը, որ ատեն Հաւելագի բարեխնայող ազգային մը (Հանսա Ասի) մուտ եւ կտակաւ թողուց կալուածի մը կէսը, որ կ'արժէ իբր 800 օսմ. ոսկի : Թէ՛ սոյն տան կէս հասոյթը եւ թէ՛ եկեղեցւոյ սովորական հասոյթները, բանկալ, պնակ, պատկազրամ, ի զազին եւլն, եւլն, բաւական չին իր ծախքներուն. ասոր համար է որ ամեն հաստատութիւն իր սեպհական եկամուտովը մատակարարելու սկզբունքը կարելի եղած չէ ճշդիւ գործադրել եւ Ա-

Բ Ա Ն Ա Ա Ի Ր Ա Կ Ա Ն

Ք Կ Ն Ո Ր Մ Ա Ը

Մարիամ՝ որ իր զաւակներէն աւելի տաք կեպով հագուած եւ անոնցմէ նուազ ութի չ'էր՝ անգորութիւն մը, ոտքի վրայ կենալու անկարողութիւն մը, շիկերու մեծ թուլութիւն մը կ'զգար վրան Սակայն ձայն չ'էր հաներ, նախ՝ վասն զի անօգուտ պիտի ըլլար ջանալ որ ամուսինը իր ընկերներէն, խաղէն, ըմպելիքէն զատ որ եւէ բանի վրայ միտք յղենցնէ. երկրորդ՝ վասն զի չ'էր ուզեր պղտիկները անարեկել :

Բայց երբ այն առաւօտ ալ մանուկներուն յանդիւրաւ եւ կոշտաբար ապտակուելը տեսաւ՝ ցատկեց, տեղէն եւլաւ եւ զաւակներուն առջեւ կենալով իբր պատուար. — Անգուժ, զօջեց ամուսնոյն, չ'ես բաւականանար կիկնդ ու զաւակներդ անօթի, մերի ձգելով, եւ կը յանդգնիր անգամ նախ իրենց ձողերը ապա իրենք զիրենք կը մատնեն ինչ հարկ մեզ սոյն ան տանջելու, անա՛ յնգի դանակ մը խողխողէ՛, մեղուր այն կիկնդ, սոյն զաւակներդ զորոնք չ'ես ուզեր սուղանել, ինտանդ, եւ եթէ այդ քաջագործութիւնն ընելու սիրտ չ'ունիս, դնա՛, մի քանի գաւաթ աւելի խմէ՛, այն ատեն արեւնարբու եւ

Աղբատ. — Աղբատաց Հոգաբարձութեան եկամուտ մուսնեւուն գրեթէ ութ տասներորդը արդիւնք են ազարակներուն, զորս Եղիպտոսի երրորդ Ստիվ գլխաւոր Սայիտ փաշա, նուիրած է 1863ին. մնացեալ երկու տասներորդը արդիւնք է ուրիշ կալուածներու եւ երկու մանր կտակներու :

Աղբատաց Հոգաբարձութեան ծախսեց կողմը ամս-

անպէս զազաններէ չտարբերելով՝ ամեն բանի կը համարձակիտ :

Գանձիկ մէկգի հրեց կինը, որ գնաց ինկաւ տախտակամանի վրայ, եւ շտապաւ դռնէն դուրս ելաւ : Մարիամ նուազած էր, մանուկները՝ անշարժ սեւեւելով իրենց սիրական մայրիկը՝ լալով վրան ինկան կարելի է ըսել որ այդ անմեղներուն արտասուքը, որ վէտ 'ի վէտ կ'իջնէր աչքերնէն եւ կը թափուէր իրենց մօր մտելագոյն այտերուն վրայ, ուշաբերեցոց զայն թշուառուէին նստաւ եւ զրկելով զաւակները՝ յորդ արտասուք թափեց . . . :

Այս միջոցին հացագործ մը կ'անցնէր փողոցէն. նորեկ հացերուն հոտը, որ չայնքան անորթելի կուշտ ստամոքսներուն անգամ, սարսոցեց պղտիկները, որոնք իրենց մօրը նայեցան պաղատալի աչքերով :

Մարիամ հասկցաւ. գուլպաները հանեց, ոտք ելաւ եւ դուրս ուղղուեցաւ՝ գուլպաները ձեռքը բռնած :

— Ի՞նչ մը կեցէ՛ք, սիրուսիկներս :

Պա՛հ մը ետքը ընտանեաց մայրը ներս մտաւ՝ ձեռքը բռնելով երկու հաց, որոնց վրայ յարձակեցան մանուկները :

Մայրը այս անգամ ալ հաց տուած էր զաւակներուն, բայց ինքը բոկոսն մնացած էր . . . :

Տղեկները կերան, ցատկոտեցան, խաղացին եւ քնացան . . . :

Ահա ը՛ տանիք մը, որ խիստ մեծ պէտք ունի բարեկարգուելու : Ի՞նչ ընելու է այս նպատակին հասնելու

նամեծ մասամբ կրեցողները և զբաղվող յատկացեալ ամսաթղթերը... յետոյ կուգան Ս. Եկեղեցւոյ մէջ պաշտօնէին ամսականը... յետոյ կուգան Ս. Եկեղեցւոյ մէջ պաշտօնէին ամսականը...

Ս. Միսսա-մասուոն եւ գերեզմանատուն (Մարմինա) — Ասոնք եւս հաստեմարեր կալուած չունէին, մինչեւ անցեալ տարի, երբ պղտիկ տուն մը, վազմ եղաւ Ս. Միսսա մատուո- գերեզմանատան, որոնց եկամուտի գլխաւոր աղբիւրներն են հողագին, նուէրներ, եւլն...

Ինչպէս տեսանք, Եկեղեցին եւ մատուո-գերեզմանատունը, տուն կալուածներ ունին միայն, իսկ Առաջնորդարանը, վարժարանն ու աղքատները թէ՛ տուն եւ թէ՛ ազարակ կալուածներ միանգամայն ունին. արդ, շիթութեան տեղի չտալու համար աւելցնենք թէ տուներու տուրքն ու հեճերը, տարեկան 20—25 ոսկիի գումար մը, առնուած չեն վերի հաշուեցոյցին մէջ, ինչպէս եւ ազարակներու եւ արմաւենիներու տուրքերը որ ստուար թիւեր կը ներկայացնեն. 1898 տարուան համար վճարուած է կլոր հաշիւով 1350 եղիպ. ոսկի, 1899 տարուան համար 1200 եղիպ. ոսկի. Այս թիւերը սակայն, ինչպէս ամեն շահ եւ վնաս, ամեն մուտք եւ ելք, որը օրին կանոնաւորապէս կ'արձանագրուին Առաջնորդարանի հաշուական տոմարներուն մէջ, այնպէս որ...

(Շարունակելի)

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Տէր և Տիկին Փիլիպպոս Եագուպեան և որդիք, Տէր և Տիկին Գրիգոր Եագուպեան և որդիք, Տէր և Տիկին Աբրահամ Եագուպեան և որդիք, Տէր և Տիկին Գէորգ Եկաւեան և որդիք, Տէր և Տիկին Խաչիկ Ոսկերչեան, Տէր և

համար, կին մը եւ երկու անմեղ մանուկներ — ապագայ անգամը ազգին — կորուստէ փրկելու համար

— Այդ ամուսնութիւնը լուծելու է, պիտի աղաղակին նորասէրները :

Շատ լաւ, լուծենք. բայց նախ խորհինք թէ այդ կարուկ միջոցով մեր փափագը պիտի լրանայ :

Հետազօտենք ուրեմն :

Մեր ներկայած այդ աղքատ այլ 'ի սկզբան օրինակելի բնտանեաց վասթարանալուն, թշուառանալուն պատճառն ի՞նչ է : — Գիտո՞յ անտեղի սրտնեղութիւնը, հետաքրքրութիւնը. եւ յետոյ երկու ամուսնոց՝ մեծամտութեան սխալ ըմբռնումի մը հետեւելով՝ իրարու զիջում ընել չ'ուզելը :

Սոյն երկու շարժաթիւները կը բաւեն. ուրիշներ փնտուելու հարկ չկայ, վասն զի ուրիշ մանրամասնութիւնք՝ կ'իջ կան՝ կրնան իբր ասոնց ծնունդ նկատուելի ընտանեաց մէջ ծագած եւ հետզհետէ զարգացած խողովութեան այդ երկու նախապատճառները իսկապէս ոչ թէ պատճառ սխալ արդիւնք են մի իրաւացի պատճառի — արդիւնք տգիտութեան — : Արդարեւ եթէ այդ ու կին ամուսնութեան պարտականութեանց անգիտակ չ'ըլլային, եթէ նոքա հմուտ ըլլային մարդկային բնութեան, նորա պահանջմանց, մէջերին գտութիւնն չը պիտի ծագէր, կամ պէթ երկայն չպիտի տեւէր, իրենք թշուառութեան — այլը անբարոյականութեան — մէջ չ'պիտի ինչային. ցաւալի տեսարաններ տեղի չպիտի ունենային. եւ՝ հետեւաբար՝ ամուսնալուծութեան հարկ չպիտի մնար :

Տիկին Սարգսյան Բրուտեան, Տէր և Տիկին Եա. գուպ Զէքմէնեան. Տէր և Տիկին Կարապետ Տէր Ազաւան, Մելիքեան և Գմգման ընտա. նիքները, Այրի Տիկին Թագուհի Մամատեան կուգան «Նոր Օր»-ի մեջոցաւ իրենց շնորհա- կալութիւնները յայտնել ամեն անոնց՝ որոնք ներկայ գտնուեցան հանգուցեալ տիկին

ՀԱՃԻ ՀԱՆՐԱՍ ԿԱԳՈՒՊԵԱՆԻ

յուզարկաւորութեան և իրենց ցաւակցական զգացումները յայտնեցին այս տխուր առթիւ:

ԳԱՀԻՐԷԻ ԱՂԲԱՏԱՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Աղքատախնամ Ընկ. Ընդհ. Ժողովը տեղի ունեցաւ Յուլիս 8ին Կիրակի առաւօտեան ժա- մը 11ին Աղքային Մանկապարտէզի սրահին մէջ ընդ ատենապետութեամբ Մեծ. Տեառ Սարգիս Պիւլպիւրեանի:

Հիմնական ու ներքին կանոնադրները վերջնական քննութեան մը բովէն անցնելէ ետք վաւերացուեցան Ընդ. Ժողովոյ կողմէն:

Նայնպէս Եաւանայ հաշուեկէտը վաւե- րացուելով, Գործ. Ժողովոյ անխնայ գործունէ- ութիւնը ընդհանուր գոհունակութեան արժա- նացաւ:

Ժողովը ցրուեցաւ կէս օրէ ետքը ժամը 1 1/2 ին:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Թիէն-Ձին 12 Յուլիս. — Չինացիք ամեն օր շարու- նակ կը ուժգնեան օտար հաստատութիւնները Թալեքին ու այրեցին Վուազի-Ղուճնի:

1 ՈՒՏՐԱՍ 12 Յուլիս — Սըր Ուօլըր Հիւլիսը շա- բաթ պիտի մեկնի Չինաստան, ուր զինուորական իշխա- նութեանց քով զիւանազան խորհրդակցանի պաշտօնը պիտի վարէ: Ծառն որոշեց 50000 մարդ զրկել ի Չին: Բորգ-Արթուրէն Թիէն-Ձին եկող ուս պաշտօնակալ մը կը պատմէ թէ՛ Չինացիք աւարի ու կրակի տուած են Նիու-Շուանի քաղաքը: Աւրած են Մանչուրիոյ քերկա- թուղին ու Բորգ-Արթուրի գետը չ'ամրացած արուար- ձանները կը թալլեն:

«Տէլի Էքսպրէս»ի 6 թուականով Թիէն-Ձինէ հա- սած հեռագրէ մը կ'իմացուի թէ՛ Չինացիները քաղա- քին արեւելքի զինարարը նորէն ետ առեր են, մեծ ջարդ մը տալով դաշնակիցներուն:

Հիմայ գիցուք թէ այդ ամուսնութիւնը լուծուեցաւ, արդիւնքն է՛նչ պիտի ըլլայ:

Ամենատարական արդարութիւնը կամ երկուքին ալ պիտի թոյլատրէ վերստին ամուսնութեան, կամ երկուքն ալ առկէ պիտի արգիլէ, ըստ որում երկու կողմն ալ յանձնաւոր են:

Սիւստ հաւանական է որ ատոնց վերստին ամուս- նութիւնը բարեբաւտիկ չ'ըլլալէն զատ ուրիշներուն ալ իրենց նոր ամուսնոց՝ զգալիութեան պատճառ պիտի ըլլար. վասն զի անտարակոյս հետեւին պիտի տանին այն պակասութիւնը եւ այդ պակասութեանց այն գիտակցութիւնը որոնք արդէն իրենց միութիւնը քակած էին: Հոս նորէն ամուսնալուծութիւն, կրկին ամուսնա- լուծութիւն, եւ մինչեւ երբ . . . :

Իսկ եթէ չ'թոյլատրուի վերստին ամուսնանալ. ի՞նչ պիտի ըլլայ մանաւանդ կնոջ վիճակը. ինչով պիտի ապրի. ձեռագործութեամբ. բայց՝ ժամանակիս բերմամբ որպէս զի կին մը կարող ըլլայ օրուան հացը ձարելու չափ գործ գտնելու, այլ եւ այլ զոտոգութիւններ յանձն առնելու է . . . : Արդեօք այս պիտի ըլլայ ամուսնա- լուծութեան բարոյականը:

Չաւուկները ո՞ր միջավայրի ազդեցութեան տակ պիտի ապրին. գինեմոլ հօ՞ր պիտի արուին, թէ ի՞նչ միջոցով ապրիլը չ'իտոցող մօր մը հակողութեան պիտի յանձնուին . . . :

Գրքոյկիս ծաւալը որքան կը ներէ ջանացիք ցուցնել որ ամուսնալուծութիւնը գեղ մը չ'է ընտանեաց բարեօրման համար: Ո՞ր է հապա այդ գեղը: — Պէտք

Պէրլին 12 Յուլիս. — Գերմանիան ծանուցարով մը կը յայտարարէ թէ գերմանական կայսրութիւնը համա- միտ չէ Չինաստանի բաժանման, ո՛չ ալ շահերու մաս- նակի առաւելութիւններու, այլ կուզէ միայն խաղաղու- թեան վերահաստատութիւնը որուն հասնելու համար անհրաժեշտ է սէրութեանց համաձայնութիւնը:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՍՏԱՆ ԵՒ ՄԱԿԵՒՈՒՆԻԱ. — Կ. Պոլսէն կը գրեն Յուլիս 3 թուականով:

«Գերմանական Աւստրո-Հունգարական ու Ան- գլիական զինուորական կցորդները վերագարձան իրենց քննական պատյոտէն, զոր ըրին եւրոպա- կան ու Ասիական Թուրքիոյ նահանգներուն մէջ, Մակեդոնիա և Հայաստան: Բայց չեն կրցեր այ- ցելի Այրանիա, հակառակ թրքական զինուոր- ներու ընկերակցութեան . . . »

ԼՈՐՏ ՔՐՕՄԷՐ, իր որդւոյն Արգոյ Ռաուլէնդ Պէրլինի հետ երէկ առաւօտեան ժամը 9 ու կէսի ճեպընթացով մեկնեցաւ Ազեքսանդրիա: Երէկ կէսօրէ ետքը Մէսաճըրիի Բօրդուկաչ շողենաւով մեկնած է Անգղիա, Մարսիլայի ճամբով:

ՁԻՆԱԿԱՆ ՈՅԺԸ. — Ռուսական բանակին ընդհանուր հրամանատարը, յենյով Չինաստանի ուս զինուորական գործակալներու տեղեկագիր- ներուն վրայ, 1,732000ի կը հաշուէ թիւը զօր- քերուն, զորս Չինաստան կրնայ հանել պատե- րազմի ժամանակ:

ՏԵՐՈՒԹԻՒՆՔ. — Լոնտրայի մէջ լրագիր- ները դեռ կը պնդեն թէ՛ ձառնի պէտք է փոխանորդութիւն տրուի բաւականաթիւ զօրքեր զրկելու Չինաստան, հոն խաղաղութիւնը վերա- հաստատելու համար. կը հրատարակեն նաեւ լուր մը թէ՛ համաձայնութեան վերջը, Ռուսիան ու ձառնը պիտի զրկեն իւրաքանչիւրն 100000 մարդ ի Չինաստան: Ֆրանսան, Անգլիան ու Գերմա- նիան պիտի զրկեն ամեն մէկը 20000 մարդ. իսկ միւս տէրութիւնները որոնց ներկայացու- ցիչները ջարդուած են, ֆրանսական, գերմանա- կան ու անգլիական օժանդակ զօրքերուն պիտի գործակցին:

ՄԻԱՅԵԱԼ - ՆԱՀԱՆԳՆԵՐԸ. — Վաշինկթընէ Յուլիս 3 թուականով կը գրեն:

«Միացեալ-Նահանգները չ'կրնալով ժամա- նակին օգնութիւններ հասցնել Բէքին, ձառն կը հսկեն, որ իր մերձակայութեան պատճառով կրնայ անմիջապէս գնդեր թափել հոն: Կը կար-

է զայն փնտռել կրթութեան մէջ, երկու սեռի ներկա- յացուցչաց մօրին մէջ միեւնոյ սա ճշմարտութիւնը որ ամուսնութիւնը միայն հեշտական կրից գոհացում չի նշանակել, այլ պաշտօն մ'է որ ունի իր պահանջումները եւ այդ պահանջմանց անթերի լրանալովն է միայն որ թէ՛ ամուսնիք երջանիկ կ'ըլլան եւ թէ՛ ազգը կը յա- նաջագրուի: Որպէս զի ամուսնութիւնը բարեբաւտիկ ըլլան, հարկ անհրաժեշտ է ամուրիները կրթել:

— Ուրեմն աւելի լաւ է բնաւ չ'ամուսնանալ, պիտի գոչն: իրենց անձնական հանդուտութիւնը ամեն բանէ վեր գտող կատմիչները:

Ազգին, Հայրենեաց եւ ընդհանուր մարդկութեան այդգիտի փեսակար անգամներու տրուելիք ամենուպեք՝ պատասխանն է՛ լուծութիւն արհամարիլի:

Սակայն Մարիամ ինքզինքը բնաւ աղէկ չ'էր զգար եւ երբ գիշերը ներուսն ու Սահակը՝ հակա՛յն ակ սար- սափելի օդին՝ խրկեց իրենց հայրը կանչելու, արդէն ուժտուպա ինկած էր խշտեկին վրայ, յուսալով թէ իր ծառայութեանց վերջը մօտեցած էր:

Կ'զգար թէ ինք պիտի աղտուր, բայց փոքրիկները ի՞նչ պիտի ըլլային:

Թէ՛ն. բողբոլիւն անօգուտ պիտի ըլլար, բայց եւ այնպէս կ'ուզէր վերջին առգամ մ'ալ թախանձել իր ամուսնոյն, որ գլխաւոր իր անմեղներուն վրայ իր բոլոր ճարտարիտութիւնը. հրապոյրը — հրապոյրը, աւա՛ղ, ի՞նչ մնացած էր — պիտի գործածէր անոր սիրտը թըր-

ծուի թէ միւս տէրութիւններն ալ նոյնը կ'ընեն:

Կը հերքուի այն լուրը թէ՛ ձառն կը նեղ- ուի Ռուսիոյ նախանձոտութենէն, ընդհակառակն երկուքն ալ համերաշխ են:

ձառնի մէջ լաւ ընդունելութիւն գտած է Միացեալ-Նահանգներու ծանուցագիրը, որուն այս վերջինք կը մասնակցին Չինաստանի մէջ օտարականաց կեանքի ու պատուոյ պաշտպա- նութեան, զօրք զրկելով ի Բէքին: Այս ծանու- ցագիրը բոլոր դաշինքներէն ալ գոհունակու- թեամբ ընդունուած է: Միացեալ-Նահանգները կը յայտարարեն նաեւ թէ՛ ի պահանջէլ հարկին պիտի աւելցնեն իրենց զրկելիք գնդերուն թիւը:

Այսպէս, զանազան կողմերէ, հաստատու- թիւն կը գտնէ ձառնի եղած առաջարկին լու- րը:

Ահաւասիկ այս մասին Մ. Պրօտրիքի յայ- րարութիւնը:

«Հրամանատարը կը կարծէ թէ՛ ո՛ր և է նոր յառաջխաղացում անկարելի է մինչև որ զօրագնդերու թիւը չ'աւելնայ: «Այս մասին գրաւոր բանակցութիւն մ'ըրած եմք ձառնի հետ, որուն պատասխանը կ'ապարտի վայրկեանէ վայրկեան:»

Անգլիա կանխաւ ազգարարած է Լոնտրայի չինական գեսպանին թէ՛ Բէքինի իշխանութիւն- ները պատասխանատու պիտի բռնուին անձնա- պէս եթէ եւրոպական գեսպանատանց անգամ- ները կամ ուրիշ օտարականներ Բէքին չարչար- ուին: Չինաստանի գեսպանը սոյն ազգարարու- թիւնը Բէքինի իշխանութեանց անվրէպ հաս- ցնելու հարկին տակ դրուած է, Այս ազգարա- րութեան պարունակութիւնը պիտի հաղորդուի Չինական բոլոր փոխարաններուն:

«Չիմացանք թէ՛ ամերիկեան ծովակալը Թա- փուի բերդերուն վրայ յարձակելու գաղափարին հակառակած ըլլայ: Ծովակալ Պրուս կը հեռա- գրէ թէ՛ դաշնակից ծովակալները կատարեալ համաձայնութեամբ կը գործեն ի Թաքու: Կաս- կածելի է թէ՛ Չինաստանի մէջ գտնուի կազ- մակերպեալ կառավարութիւն մը, որուն դէմ Անգլիա պատերազմի բռնուած համարուի . . . »

Բ. ԽՏԻՎԸ. — Եւրոպական սուրհանդակը հետեւեալ մանրամասնութիւնները կը բերէ Բ. Խտիվին նկատմամբ, յ'Անգղիա: Բնակութեան միջոցին . . .

«Յուլիս 1ին շաբաթ առաւօտ, Բ. Խտիվը այցելութիւն տուաւ Գոսթաքի բաշային Թուր- քիոյ գեսպանատունը, քիչ յետոյ Գոսթաքի բա-

թագանելու համար: Պիտի յիշեցնէր այն երջանիկ օրերը յորում՝ սիրագեղ կը գրկէր եւ լանջարը վրայ կը սեղ- մէր այդ փափկակազմ մանկիկները, որոնք իրենց թա- թիկներուն մէջ բոլոր զօրութեամբ կը քաշէին անոր երկայն ընչացքը: Պիտի ջանար արթնցնելու այդ մե- ռեալ սրտին մէջ յիշատակները այն անցած տարիներուն ուր պզտիկ իր՝ Գառնիկին՝ գրկելու եւ մեծ առջեւ ինկած պտոյտներ կ'ընէին, յօժարակամ եւ իջմանկաբար խնդալով տղեկին ցատկոտուքներուն եւ վազվառուք- ներուն վրայ:

Վերջապէս պիտի ընէր ինչ որ իր մայրական գորո- վը պիտի թելադրէր նոյն պահուն, ազաչանք, պաղա- տանք, սպառնալիք . . . :

Այո՞, սպառնալիք զոր պիտի կատարէր իր ուրուա- կանը, եթէ նա չարունակէր պարտադանց գանուիլ իր գաւակներուն մասին:

«Պարտազանց Բայց միթէ ինչ՞ մայրը՝ կատարած էր այդ պարտականութիւնը, որու զանցատուը կը վե- րագրէր մի միայն իր ամուսնոյն ինչ ինչ ըրած էր մանկիկներու ապագայ բարեկեցութեան ի նպաստ Յի- րաւի կարողութեան ներածին չափ սնուցած, պատասպա- րած էր զանոնք, բայց միթէ այդքանը կը բաւէր Վայ- րի, գիշատիչ գազաններն անգամ բնագոյմամբ այնքան գորով կը տածեն իրենց կորիւններու վրայ որ մարդիկ կը գերազանցեն երբմին:

(Շարունակելի)

չան փոխադարձ այցելութիւն տուաւ Ն. Բարձրութեան, Պրքինկէմ-Բալէյսի մէջ: Յետոյ Ն. Բարձրութիւնն այցելեց Եօրքի Դքսին ու նախաճաշեց Բէմպրիճի գրասէն քովը ի հիւսէսդըը Հաուզ:

Բ. Խտիվը կիրակին անցուց Պրինկէմ-Բալէյս, և քանի մը պատուներ ըրաւ պարտէզին մէջ: Ն. Բարձրութիւնը ճաշի հրաւիրած էր Բէմպրիճի գրասէն, Գոսթաքի բաշան և շատ մը ուրիշ անձնաւորութիւններ:

Երկուշաբթի Յուլիս 2ին, Բ. Խտիվը հրաւիրուեցաւ Մէլպօրուկ-Հաուզ, Կալլէսի իշխանին և իշխանուհիին քով, և յետոյ ներկայ գտնուեցաւ իշխանին և իշխանուհիին կողմէն Պրինկէմ-Բալէյսի մէջ տրուած նուագահանգէսի մը:

Երեքշաբթի Յուլիս 3ին, Կիլոնոյի ընդունելութիւնը տեղի ունեցաւ:

Լորտ քաղաքացեալը Խտիվին յանձնեց բարի գալուստի ուղերձ մի պարունակող ոսկիէ արկղիկ մը: յետոյ Խտիվը հետեւեալ խօսքերն արտասանեց:

«Միւրտ, Միւրտք ու Տեաքք»

Անկեղծօրէն շնորհակալ եմ Ձեր ուղերձին համար: Մեծ հաճոյք զգացի այցելել կրնալու այս վաղեմի քաղաքը և վստահ եմ թէ Բրիտանական կայսրութիւնն ու Եգիպտոսի յարաբերութիւնները պիտի ամրապնդուին այս այցելութեամբ, (ծափահարութիւնք) և թէ՛ իրենց առևտրական շահերը, այնքան սերտիւ կապուած, պիտի բարգաւաճին իրենց փոխադարձ օգտին համար:

Կեկորդեմ անկեղծ շնորհակալութեամբ:

Խտիվը գնաց յետոյ խնջոյքի սրահը: Կրկնաօդոր կուսարսի նուագածու խումբը գրոշակիր, կ'երգէր ի պատիւ Մեծ-Հիւրին:

Լոնդոնի միջոցին, Լորտ քաղաքացիսն առաջարկեց Թագուհիին կենացը:

Ն. Բ. Խտիվը պատասխանեց շնորհակալեաց քանի մը խօսքերով, այն մտերմական ասպրնջականութեան համար, որով ընդունած էին զինքը քաղաքին մէջ:

ՂԱՁԻ ՄՈՒԻԹԻԱՐ — Եւրոպական լրագիրները Կ. Պոլսէն առնուած տեղեկութիւններ կը հրատարակեն Ղազի Մուխթար բաշայի վրայ որ հաւաներ է եղեր վերագառնալու Եգիպտոսը բայց, եթէ մէկ տարուան վտրձէ մը ետքը, Պալատին ու Իրան պաշտօնատարները դարձեալ իր դիրքը վրդովեն, վերջնապէս պիտի թողու եղեր Եգիպտոսը, Թուրքիոյ կառավարական դրութեան բարենորոգման աշխատելու համար, Միւս կողմէ, Կ. Պոլսէն կիմացնեն թէ՛ ազատական Կեդր. Մասնախումբը՝ Սուլթանին ու Իրան Ձեկուցագիր մ'ուղղած է պահանջելով խորհրդարանի մը հաստատութիւնը, փոխանակ կայսրութեան Պետական խորհրդին:

Ձեկուցագիրը մէջ կը բերէ ժողովրդի ստուար մասին վայրացման պատճառներն ընդգէմ վեհապետին եւ իր պարոյրին, ինչպէս նաև ընդգէմ կաշառակեր հրոսախումբէ մը բաղկացեալ կառավարութեան, որ, առաջին քարտուղարէն մինչև Մեծ-Եպարքոսը, Սուլթանին վրայ կը ձգեն բոլոր պատասխանատուութիւնները: Ձեկուցագիրը կ'ստիպէ Սուլթանը իր կամքով շնորհելու բարենորոգումներ, եթէ ոչ, մասնախումբը վճռած է ի գործ դնել ամեն միջոցներ:

ՀՐԱՅԱԼԻ ԲՈՅՍ ՄԸ

Ս. ՆԵՐՍԻՍԻԱՆ

Լսած էք թիպէթի հրաշալի ծառը, որ թէպէտ նոսրածանօթ չէ մեր կողմերը, բայց մեծ հոշակ հանած է արևելեան թիպէթի մէջ: Որովհետեւ պարտականութիւն մ'է աւելորդագազութիւնները ձաղկել և խա-

բերայութիւնները երեսն հանել միշտ առթիւն օգտուինք եւրոպական թերթէ մը քաղելով հետեւեալը:

Բ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

«Վերջերս լրջախոհ անձերէ լսեցինք որ մեծ գումարի մը ծախուած է մէկ անրեւը սոյն նուիրական ծառին: Վասնզի նուիրական է այս արտակարգ ծառը, որ իր իւրաքանչիւր տերեւին վրայ կը կրէ թիպէթական գիր մը: Եւ քանակիւնները կը պնդեն թէ թիպէթական այրբնարանը անանկ ինքնիրեն կը բուսնի՝ քանի տերեւները մեծանա, և բարեբեր տարիներու մէջ պատկերներ կը բուսնին փոխանակ տառերու: Հայր Հիւ որ առաջինն եղաւ այս հրաշալի ծառին վրայ խօսող, կ'անուանէ զայն «Մառ բերապատկեր»: Տերեւներու, ցօղունի, կոճղին վրայ պատկերներ կը տեսնուին նրկարուած: Ամեն ճամբորդ կրնայ տեսնել այդ ծառը Լիուսար գիւղին մէջ, Պուտտայի տաճարին մօտ: Մէկ հատիկ է այն ծառը աշխարհիս վրայ, բան մը՝ որ մեծ գարմանք պիտի պատճառէր բուսարանութեան քիչ շատ հմուտ այցելուի մը:

1891 ին, երբ Ուիլիամ Բօգիլ Չինաստանէ կը վերադառնար, ու պիտի անհնդ սոյն հոշակաւոր ծառը՝ գնաց Լիուսար, որ զիւր մ'է 800 քնակիչներով, և որ ունի անագին լամպարան մը, ուր կը պատասպարուին 3000 լամպեր, այսինքն Պուտտայի քահանաներ կամ վարդապետներ: Եւ կրօնաւորները ունին բազմաթիւ տաճարներ, որուն ամենամեծին մէջ կը տեսնուի՝ երեք մէթր բարձրութեամբ գահի մը վրայ՝ Պուտտայի մէկ արձանը, որուն համար կ'ըսուի թէ զուտ ոսկիէ շինուած է: Պատկերաբոյս ծառն ալ այս տաճարէն տասը մէթր հեռու է: Բայց որովհետև Բօգիլ փետրուար ամսուան մէջ գնաց հոն, ծառը տակաւին տերեւազուրկ վիճակի մէջ էր: հետեւաբար ճամբորդը ցաւօք սրտի ետ դարձաւ՝ վերադառնալու նպատակաւ, և ամեն ուրեք պատմեց որ յիշուի բերապատկեր ծառը գոյութիւն ունէր: Երողութիւն մը որ թէ՛ ճիշդ էր եւ թէ՛ ճիշդ չէր: Արդարեւ, Սրբազան Պիէ, որ Արտաքին առաքելութեան կը պատկանի եւ որ թիպէթի առաքելական փոխանորդն է, պատկերաբոյս ծառին գաղտնիքը երեսն հանեց, շնորհիւ ուխտագնաց լամպի մը, որ յիշեալ եպիսկոպոսին հոգատարութեամբ իւր հիւանդութենէն բժշկուելով թողուց իր կրօնքը և կաթողիկոսացաւ: Չուարձալի է պատմութիւնը: Լիուսարի մեծ լամպարանի ծախքերը մեծ գումարի կը կարօտին: Արդ երկրիս վրայ ձրի տեսարան չկայ, նոյն իսկ ի թիպէթ:

Յենդով այս համաշխարհային սկզբունքին վրայ, Պուտտայական կրօնաւորները ի սկզբանէ անտի հնարեցին այդ բերապատկեր ծառը: Գարնան և նոյնիսկ ամառը՝ քանիցս անգամ վարպետորդի լամպ մը կը տպէ՝ ձեռնամաղով մը և ամեն մէկ տերեւին վրայ՝ հետեւեալ բանաձեւին տառերը: օմ մանե բասօմե օմ (փառք Պուտտայի ի Լուտա) կոճղին վրայ ալ կը տպէ, եւ կեղեւն ու տերեւները կը ծախուին այցելուներուն ինչպէս կը տեսնէք, զաղտնիքը այնքան բարձր չէ:

Կը յուսանք թէ բնապատմիները այլ եւս չպիտի յոգնին որոշելու թիպէթի այդ հոշակաւոր ծառին տեսակին, որ արդէն գտնուած է եւ որուն անունն է խաբերայութիւն:

Գ. ԽՈՐՀՐԴԱՅՈՒԹԻՒՆ

Արդեօք մեր բրիտանէութիւնը ե՞րբ պիտի ունենայ իր Պիէ կ'պիսկոպոսը, ուսումնասիրելու համար մեր հրաշագործ պատկերներն ու շուրերը: աշխարհին բոլոր Լուսարներ և Լօրէթներու (1) երևուցումները և ամենէն առաջ սա մօտակայ Մաթաթայի Աստուածածնայ ծառին տարիքն ու պաշտօնը, որու մասին վախ ունիմ թէ մի՞ գուցէ թիպէթի ծառին հետ խնամութիւն մ'ունենայ:

Դ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Առ Պիէ կ'պիսկոպոս, ներկայացուցի նիւթապաշտ բրիտանէութեան — Եպիսկոպոս «Հան նախ զգերան յականէ քուսմէ»:

ԱՏԱՆԱԲՈՅԺ Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Դիմողները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտ ժամը 7էն մինչև 8, Գաֆէ տը լա Պուրսի կից, թիւ 9 արարթըմանին մէջ Բ. յարկ:

(1) Լուրտ՝ ֆրանսական եւ Լօրէթ՝ իտալական քաղաքներ են, որոնց մօտ Աստուածածին յաճախ ինքզինքը կը յայտնէ՝ գիշեր ատեն, ըստ աւանդութեան Հոռոմէական կրօնաւորներուն:

Le gérant, J. MUNIER.

ԿՈՒՉԷ՛Ք ՈՒՆԵՆԱԼ

ՌԱՍԿԻ
ԿՈՒՉԷՆ ԼԱՐԻՈՂ, ԽԵՍՍ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ
ԺՄԱՑՈՅՑ ՄԸ
ՄԻՄԻԱՅՆ 120 ՂՐԵ. ՎՃԱՐՆԵԼՈՎ
ԴԻՄԵՑԷ՛Ք

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ ՄՈՒՄԲԻ ՓՈՂՈՑ
Ուր կընաք գտնել նաև ՌՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներու ամենադուրամատչելի գններէն սկսելով մինչև ազամանդազարդ: Արծաթ ժամացոյցներ 50 զրուչէն սկսեալ: Նիքէլ որմօնթուստ ժամացոյցներ 22 զրուչէն սկսեալ: Նաև Ոսկի, արծաթ եւ ոսկեպատ շքեթաներ եւ գոհարեղէններ, ինչպէս նաև պատի եւ քօնօսի բազմազան բանտիւններ:
Ամբիկեան Նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 զրուչի անհաւատալի գնոյ փոխարէն, որոնք լաւ կ'ըսեն:

Ուրեմն զիմեցէ՛ք ուղղակի:
ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ-ՎՐԹԱՐԱՆ ԳԱՀԻՐԷ

Հաստատուել 1 յունվար 1897
Հիմնադիր-Տեօրէմ
Ս. ԲԻՐՍՍ

Սոյն հաստատութիւնը փոխադրուած է այժմ Ապսին, և Յուլիս 1է սկսեալ՝ կ'ընդունի միայն գիշերօթիկ աշակերտներ, 13 տարին լրացուցած և գէթ նախնական կրթութիւնն ստացած: Կ'աւանդուի հայերէն, ֆրանսերէն, և անգլիերէն: նաև, առևտրական աշխարհագրութիւն ու տօմարակալութիւն, գործնական մէթոտով: Ընդունելութեան պայմաններուն և ուրիշ մանրամասնութեանց տեղեկանալու համար գիմել կրթարանի Տեսչութեան, ՆՈՐ ՕՐ ի խմբագրատունը, Պազար Մուրուրի մէջ, թիւ 38 գրասենեակը, ուր Տնօրէնը կը գտնուի, բայ ի կիրակիէ, ամեն օր կէս օրէ ետքը ժամը 3էն մինչև 6:

ԱՒԱՆԴԱՏԱՐ (ԷՄԱՆԷԹՃԻ)
ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

ՇԱՐԷ ՄՕՀԱՄՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ ԷԼ ԽԱԼԻ, ԳԱՀԻՐԷ
Ի. Պալսայ մուսուլմանական խմբուրիմ Բով Բիւ 81

Կը յայտարարէ արգոյ հասարակութեան թէ՛ Կ. Պոլսոյ Պաղչէ Գաբու, Թաշխանի թիւ 26 վաճառատունը բնակող և երկար ժամանակէ ի վեր իր փորձառութեամբ և ուղղամտութեամբ բոլոր պատուաւոր յաճախողաց վստահութիւնը գրաւող Էմանէթնի Աբրահամ էֆ. Պալթայեանի հետ ընկերակցութիւն մը կազմած է: Այսուհետև Կ. Պոլսէն Եգիպտոս և Եգիպտոսէն Կ. Պոլիս զրկուելիք ամեն տեսակ աւանդներ անկորուստ ու ապահով պիտի յանձնուին սահմանեալ տեղերին:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ
ՈՒՐԲԱԹ 13 ՅՈՒԼԻՍ 1900

8664	5976	6285	187	4904	2540
8752	587	2542	582	4431	7552
6167	898	703	5138	1629	8125
6152	9388	9690	5369	6127	3423
	9795	3373	9197		

Տպագրութիւն Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ — Պազար Մուրուր